



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2013 թվականի N 639 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը և առավելագույն գները հաստատելու մասին» N 441-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման և հավելվածի վերնագրից ու որոշման 1-ին կետից հանել «և առավելագույն գները» բառերը.

2) որոշման հավելվածում՝

ա. հանել «Չափի միավորը» և «Կողմնորոշիչ գինը» սյունակները.

բ. հանել «Կարիչի մետաղալարե կապեր» ապրանքախմբի «2. միջին» ապրանքատեսակի «Արտադրողը, ապրանքային անվանումը, քաշը, յուղայնությունը և այլ ֆիզիկական նկարագրեր» սյունակի «10 մմ/6 մմ» բառերը,

գ. հանել «պատճենահանման մեքենա» ապրանքախմբի երկրորդ ապրանքատեսակի տողը,

դ. հանել «Սկաներ» ապրանքախմբի «3. Թմբուկային (барабанный)» տողը,

ե. «Թղթապանակ» ապրանքախմբում լրացնել նոր ապրանքատեսակի նկարագիր՝ հետևյալ բովանդակությամբ.

	պոլիմերային թաղանթ (ֆայլ)	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ:
--	---------------------------	---

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ապրանքների ցանկում ընդգրկված ապրանքների առավելագույն գները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից»:

4) որոշման 2-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «իսկ գները չպետք է գերազանցեն սույն որոշման 1-ին կետով հաստատված ապրանքատեսակների առավելագույն գները» բառերը փոխարինել «իսկ գները չպետք է գերազանցեն սույն որոշման 1.1-ին կետի համաձայն սահմանված առավելագույն գները» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «1-ին կետով սահմանված առավելագույն գները» բառերը փոխարինել «1.1-ին կետի համաձայն սահմանված առավելագույն գները» բառերով, իսկ «առկայության դեպքում.» բառերից հետո ենթակետը լրացնել «, որն ստանալու համար պատվիրատուն դիմում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.» բառերով,

գ. 3-րդ ենթակետը «և (կամ)» բառերից հետո լրացնել «և սույն որոշման 1.1-ին կետի համաձայն սահմանված» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունիսի 21  
Երևան

